ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 Գյումրի Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2026 թվականի 2919-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 1000-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու «Իմ հզոր համայնք» խմբակցության ղեկավարի կողմից ներկայացված գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հոկտեմբերի 12-ին 18331 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի մայիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու մշտական գործող թվով չորս հանձնաժողովների կազմերը հաստատելու մասին» N 1000-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 3-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը.
    1) 8-րդ ենթակետում «Կիրակոսյան Վահե Մարտունի» բառերը փոխարինել «Տիրայան Լևոն Սերյոժայի» բառերով,
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լևոն Տիրայանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ք. Գյումրի2026

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հունվարի 2026 թվականի N 2920Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 2640-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 17-ի N 2640-Ա որոշման (այսուհետ որոշում) մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին, 3-րդ մասերով 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով **որոշում եմ՝**.

1. 2026 թավականի սեպտեմբերի 17-ի «Քաղաքացի Զարե Մկրտչի Սահակյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Լևոն Մադոյան փողոց 111 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 34.54 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, օրինական ճանաչելու մասին» N 2640-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Վերնագրում, որոշման 1-ին կետում «34,54 (երեսունչորս ամբողջ հիսունչորս հարյուրերորդական)» թվերը և բառերը փոխարինել «27,88 (քսանյոթ ամբողջ ութսունութ հարյուրերորդական)» թվերով և բառերով.
   2) Որոշման 1-ին կետում օրինական բառից հետո լրացնել «իսկ 6,66 (վեց ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունները թողնել ինքնակամ»
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Զարե Մկրտչի Սահակյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» հոկտեմբերի 2026 թվականի N 2921 Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՆԻԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 7-ՐԴ ՓՈՂՈՑ 8 ՇԵՆՔ 8 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ՎԱՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2026 թվականի հոկտեմբերի 8-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Հովհաննես Վանիկի Գալստյանը (անձնագիր՝ AL0615844, տրված՝ 07.02.2024 թվականին 065-ի կողմից)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 10 սեպտեմբերի 2010 թվականին ծնված Վանիկ Հովհաննեսի Գալստյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №075854) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամաս 7-րդ փողոց 8 շենք 8 բնակարանի մասնաբաժինը:

Վերոնշյալ հասցեի բնակարանի համասեփականատեր է հանդիսանում նաև անչափահաս՝ Վանիկ Հովհաննեսի Գալստյանը (հիմք՝ «13» մայիսի 2016 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 13052016-08-0004):

Նիստին ներկա գտնվող անչափահասի հայրը՝ Հովհաննես Վանիկի Գալստյանը հայտնեց, որ իր ընտանիքին է պատկանում նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աբովյան 1 նրբանցք 88 տունը, որտեղ և ներկա պահին բնակվում են (հիմք՝ տեղեկանք N 1605 տրված՝ 08.10.2026 թվականին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի «Գյումրու Բնակարանների Սպասարկում» փակ բաժնետիրական ընկերության կողմից):

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Վանիկ Հովհաննեսի Գալստյանը տվել է համաձայնություն իր մասնաբաժինը վաճառելու վերաբերյալ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Հովհաննես Վանիկի Գալստյանի 2026 թվականի հոկտեմբերի 8-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 18186 թվագրությամբ) և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 8-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համաձայնություն տալ Հովհաննես Վանիկի Գալստյանին (անձնագիր՝ AL0615844)՝ վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 10 սեպտեմբերի 2010 թվականին ծնված Վանիկ Հովհաննեսի Գալստյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №075854) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամաս 7-րդ փողոց 8 շենք 8 բնակարանի մասնաբաժինը, բնակարանային պայմանները բարելավելու կապակցությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովհաննես Վանիկի Գալստյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

2026-10-05 12:50:20 GMT+4
Վավերացված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» հոկտեմբերի 2026 թվականի N 2922Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏՅՈՄ ՎԱՆԻԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 7-ՐԴ ՓՈՂՈՑ 8 ՇԵՆՔ 8 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ՍԻԼՎԱ ԱՐՏՅՈՄԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2026 թվականի հոկտեմբերի 8-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Արտյոմ Վանիկի Գալստյանը (անձնագիր՝ AT0386497, տրված՝ 14.02.2020 թվականին 016-ի կողմից)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 10 օգոստոսի 2010 թվականին ծնված Սիլվա Արտյոմի Գալստյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №075596) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամաս 7-րդ փողոց 8 շենք 8 բնակարանի մասնաբաժինը:

Վերոնշյալ հասցեի բնակարանի համասեփականատեր է հանդիսանում նաև անչափահաս՝ Սիլվա Արտյոմի Գալստյանը (հիմք՝ «13» մայիսի 2016 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 13052016-08-0004):

Նիստին ներկա գտնվող անչափահասի հայրը՝ Արտյոմ Վանիկի Գալստյանը հայտնեց, որ իր ընտանիքին է պատկանում նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մ.Մկրտչյան փողոց 38ա շենք 33 բնակարանը, որտեղ և ներկա պահին բնակվում են (հիմք՝ 13 մարտի 2020 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 13032020-08-0008), (հիմք՝ տեղեկանք տրված՝ 07.10.2026 թվականին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Գյումրի Կենտրոն» համատիրության կողմից):

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Սիլվա Արտյոմի Գալստյանը տվել է համաձայնություն իր մասնաբաժինը վաճառելու վերաբերյալ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Արտյոմ Վանիկի Գալստյանի 2026 թվականի հոկտեմբերի 8-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 18130 թվագրությամբ) և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 8-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համաձայնություն տալ Արտյոմ Վանիկի Գալստյանին (անձնագիր՝ AT0386497)՝ վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 10 օգոստոսի 2010 թվականին ծնված Սիլվա Արտյոմի Գալստյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №075596) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամաս 7-րդ փողոց 8 շենք 8 բնակարանի մասնաբաժինը, բնակարանային պայմանները բարելավելու կապակցությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտյոմ Վանիկի Գալստյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2026 թվականի N 2923-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՖՈՐԱԼԲԵՐԳԻ ՓՈՂՈՑ № 4/26 ՀԱՍՑԵԻ 243.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆորալբերգի փողոց № 4/26 հասցեի 243.0 (երկու հարյուր քառասուներեք) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆորալբերգի փողոց № 4/26 հասցեի 243.0 (երկու հարյուր քառասուներեք) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

Восстановимая подпись

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано ARAKELYAN AVETIS 3910850278 Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» փետրվարի 2026 **թվականի** N 2924-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի № 2844-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի փետրվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Անանիա Շիրակացու փողոց №181/16 հասցեի 251.2 քառակուսի մետր մակերեսով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» № 2844-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Անանիա Շիրակացու փողոց №181/16 հասցեի 251.2 քառակուսի մետր մակերեսով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» № 2844-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) Որոշման 4-րդ կետում «Արամայիս Հելսինկի Ղազարյանի և Ռոզա Միքայելի Միքայելյանի» բառերը փոխարինել «Արշակ Ռաֆիկի Մանուկյանի» բառերով:
   2) Որոշման 5-րդ կետում «Արամայիս Հելսինկի Ղազարյանին» բառերը փոխարինել «Արշակ Ռաֆիկի Մանուկյանին» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արշակ Ռաֆիկի Մանուկյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Восстановимая подпись
Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278

2026թ. փ.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<12>> հոկտեմբերի 2026 թվականի N 2925-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԼԻԼԻԹ ՀՐԱՉԻԿԻ ԱՂԵԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Իր աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական Լիլիթ Հրաչիկի Աղեկյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափի 50 տոկոսի չափով:

2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլիթ Հրաչիկի Աղեկյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հունվարի 2026 թվականի N 2926-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի N 1140-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացի Արմենակ Դավթի Ղազարյանին և Փարիզ Արմենակի Պողոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գյումրի քաղաքի Նար-Դոսի փողոց № 46 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 87.45 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը օրինական ճանաչելու եվ օրինական հողամասին կից ավել օգտագործվող 130.2 քառակուսի մետր մակերեսով հողամասի եվ նրա վրա առկա շինությունների կարգավիճակի մասին» N 1140-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել թույլ տրված վիրապակի պատճառով:
Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացի Արմենակ Դավթի Ղազարյանին և Փարիզ Արմենակի Պողոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գյումրի քաղաքի Նար-Դոսի փողոց № 46 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 87.45 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը օրինական ճանաչելու եվ օրինական հողամասին կից ավել օգտագործվող 130.2 քառակուսի մետր մակերեսով հողամասի եվ նրա վրա առկա շինությունների կարգավիճակի մասին» N 1140-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշման 2-րդ կետում «92.93 (իննսուներկու ամբողջ իննսուներեք հարյուրերորդական)» բառերը և թվերը փոխարինել «77.57 (յոթանասունյոթ ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական» թվերով և բառերով:
2) Որոշման 4-րդ կետում կետում «52.7 (հիսուներկու ամբողջ յոթ տասնորդական)» բառերը և թվերը փոխարինել «52.68 (հիսուներկու ամբողջ վաթսունութ հարյուրերորդական» թվերով և բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմենակ Դավթի Ղազարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2026 թվականի N2927-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Հ. ՍԱՐԳՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 224.74 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ 540.48 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ՆԱԻՐԱ ՌՈՒԲԵՆԻ ՋԱՆԻԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Հ. Սարգսյան փողոցի հարևանությամբ գտնվող 540.48 (հինգ հարյուր քառասուն ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցվել է 224.74 (երկու հարյուր քսանչորս ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տուն, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Նաիրա Ռուբենի Ջանիկյանին:
Քաղաքացի Նաիրա Ռուբենի Ջանիկյանին դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ հողամասի և շինության նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, համաձայն «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 38-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացի Նաիրա Ռուբենի Ջանիկյանի՝ (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի հունիսի 29-ին № 11818 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Ճանաչել քաղաքացի Նաիրա Ռուբենի Ջանիկյանի (ծնված 1966 թվականի հունվարի 20-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Հ. Սարգսյան փողոցի հարևանությամբ գտնվող 400.0 (չորս հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 224.74 (երկու հարյուր քսանչորս ամբողջ յոթանասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունների նկատմամբ:
2.Գյումրի քաղաքի Հ. Սարգսյան փողոցի հարևանությամբ գտնվող սահմանված չափից ավել օգտագործվող 140.48 (մեկ հարյուր քառասուն ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Նաիրա Ռուբենի Ջանիկյանին (ծնված 1966 թվականի հունվարի 20-ին), տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) դրամ 1.0 քառակուսի մետրի դիմաց, ընդամենը 624012 (վեց հարյուր քսանչորս հազար տասներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Նաիրա Ռուբենի Ջանիկյանին պատշաճ կարգով իրազելու օրվան հաջորդող օրվանից:
4.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2026 թվականի N 2928-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈԳՈՒՆՑԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 73.7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 73.7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (64.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Գոգունցի փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 73.7(յոթանասուներեք ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 73.7(յոթանասուներեք ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր արտաքին (64.9(վաթսունչորս ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 20267XP53K ծածկագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Գյումրի քաղաքի Գոգունցի փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 73.7(յոթանասուներեք ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 73.7(յոթանասուներեք ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր արտաքին (64.9(վաթսունչորս ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Օկսանա Մերուժանի Ղազարյանին :

3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:

4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2026 թվականի N 2929-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻՄԻՐՅԱԶԵՎԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 116.34 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 116.34 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (91.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Տիմիրյազևի փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 116.34 (մեկ հարյուր տասնվեց ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 116.34 (մեկ հարյուր տասնվեց ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (91.5(իննսունմեկ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2026JD5QD9 ծածկագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Գյումրի քաղաքի Տիմիրյազևի փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 116.34 (մեկ հարյուր տասնվեց ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 116.34 (մեկ հարյուր տասնվեց ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (91.5(իննսունմեկ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Ինգա Մկրտչի, Ռուբիկ Օնիկի, Վարդանուշ Մկրտչի, Կարուշ Ռուբիկի և Զոհրաբ Ռուբիկի Պետրոսյաններին:

3.Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:

4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2026 թվականի N 2930-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐԱՄ ՎԱՉԱԳԱՆԻ(1/2 ՄԱՍ) ԵՎ ԳՐԻՇԱ ԽԱՉԻԿԻ(1/2 ՄԱՍ) ԱԼԵՔՍԱՆՅԱՆՆԵՐԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՆԱՐ-ԴՈՍԻ ՓՈՂՈՑ № 33 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 16.54 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 2 (ԵՐԿՈՒ) ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 1 (ՄԵԿ) ՊԱՏՈՒՀԱՆԸ, ԻՆՔՆԱԿԱՄ 2 (ԵՐԿՈՒ) ԲԱՑՎԱԾՔԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 253.17 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Արամ Վաչագանի(1/2 մաս) և Գրիշա Խաչիկի(1/2 մաս) Ալեքսանյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր № 5708, 5711, 5712 տրված 2023 թվականի օգոստոսի 29-ին) Գյումրի քաղաքի Նար-Դոսի փողոց № 33 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործում է 253.17 (երկու հարյուր հիսուներեք ամբողջ տասնյոթ) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, սեփական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 16.54(տասնվեց ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, ինքնակամ բացվել է 2 (երկու) պատուհաններ, ինքնակամ 2(երկու) բացվածք և ինքնակամ փակվել է 1 (մեկ) պատուհան:
Քաղաքացիներ Արամ Վաչագանի և Գրիշա Խաչիկի Ալեքսանյանները դիմել են Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինության նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:
Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի և 18-րդ կետի դ) ենթակետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 20269DXJNW ծածկագիրը և հաշվի առնելով քաղաքացիներ Արամ Վաչագանի և Գրիշա Խաչիկի Ալեքսանյանների դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի մայիսի 29-ին № 6956 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Քաղաքացիներ Արամ Վաչագանի(1/2 մաս) և Գրիշա Խաչիկի(1/2 մաս) Ալեքսանյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Նար-Դոսի փողոց № 33 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 16.54(տասնվեց ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական և ինքնակամ բացված 2 (երկու) պատուհանները, ինքնակամ փակված 1 (մեկ) պատուհանը, ինքնակամ 2 (երկու) բացվածքը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 13625(տասներեք հազար վեց հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2.Ճանաչել քաղաքացիներ Արամ Վաչագանի(1/2 մաս)(ծնված 1955 թվականի հոկտեմբերի 9-ին) և Գրիշա Խաչիկի(1/2 մաս)(ծնված 1950 թվականի օգոստոսի 2-ին) Ալեքսանյանների ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Նար-Դոսի փողոց № 33 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին

կից ավել օգտագործվող 253.17 (երկու հարյուր հիսուներեք ամբողջ տասնյոթ) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արամ Վաչագանի և Գրիշա Խաչիկի Ալեքսանյաններին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» նոյեմբերի 2026 թվականի N 2931 -Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՐԱՏ ԳԱԲՐԻԵԼԻ ԿՐՋՈՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ N16 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 105.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1 (ՄԵԿ) ԴՈՒՌՆ ՈՒ 2 (ԵՐԿՈՒ) ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 92.99 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Արարատ Գաբրիելի Կրջոնյանին պատկանող Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոց N16 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված են 105,0 (հարյուր հինգ) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, ինքնակամ բացված է 1 (մեկ) դուռ ու 2 (երկու) պատուհաններ (հիմք՝ ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2026ZE2NZR ծածկագիր), օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 92.99(իննսուներկու ամբողջ իննսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Արարատ Գաբրիելի Կրջոնյանի ներկայացուցիչ Սեյրան Սահակյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով քաղաքացի Արարատ Գաբրիելի Կրջոնյանի ներկայացուցիչ Սեյրան Սահակյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականին N5853 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Արարատ Գաբրիելի Կրջոնյանին (ծնված 1968 թվականի հունվարի 14-ին) պատկանող Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոց N16 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 105,0 (հարյուր հինգ) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 1 (մեկ) դուռն ու 2 (երկու) պատուհանները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 8175 (ութ հազար հարյուր յոթանասունհինգ) Հայաստանին Հանրապետության դրամ :
2. Ճանաչել քաղաքացի Արարատ Գաբրիելի Կրջոնյանի սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոց N16 հասցեի բնակելի տան հողամասին կից, ավել օգտագործվող 92.99(իննսուներկու ամբողջ իննսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա շինությունների նկատմամբ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքաց Արարատ Գաբրիելի Կրջոնյանի ներկայացուցիչ Սեյրան Սահակյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հունվարի 2026 թվականի N 232- -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 181/7 ՀԱՍՑԵԻ 232.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 690.02 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (556.68 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՇԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացու փողոց N181/7 հասցեի 232.2(երկու հարյուր երեսուներկու ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N21052024-08-0009 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 26-ի N139-Ա որոշումը և քաղաքացի Արշակ Մանուկյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում N 26471 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի քաղաքի Շիրակացու փողոց N181/7 հասցեի հողամասում կառուցված 690.02(վեց հարյուր իննսուն ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (556.68(հինգ հարյուր հիսունվեց ամբողջ վաթսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը՝ 5640914(հինգ միլիոն վեց հարյուր քառասուն հազար ինը հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Արշակ Մանուկյանին:
2. Գյումրի քաղաքի Շիրակացու փողոց N181/7 հասցեի 232.2(երկու հարյուր երեսուներկու ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ տվյալ հողամասի կադաստրային գնով, որը կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 2441351 (երկու միլիոն չորս հարյուր քառասունմեկ հազար երեք հարյուր հիսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Արշակ Մանուկյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Արշակ Մանուկյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Արշակ Մանուկյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքաց Արշակ Մանուկյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

«12» հունիսի 2026 **թվական** N293-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 04-Ի № 1702-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը քաղաքացի Լիլիթ Վահանի Ադոյանին նվիրատվության եղանակով օտարելու մասին» № 1702-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ տեղի է ունեցել վրիպակ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, « Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ,3-րդ մասերի դրույթներով՝

Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի 2026 թվականի հունիսի 4-ի №1702-Ա «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը գույքը Լիլիթ Վահանի Ադոյանին նվիրատվության եղանակով օտարելու մասին» № 1702-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման նկարագրական մասի, պատճառաբանական մասի 1-ին կետի ե) ենթակետի և 2-րդ կետի «2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա» բառերը և թվերը փոխարինել «2026 թվականի սեպտեմբերի 15-ի N145-Ա» բառերով և թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ
փոխարինող

Քաղաք Գյումրի 2026թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» հոկտեմբերի 2026 թվականի №2934-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 66 ՇԵՆՔ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №432084) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով «Բյութի Ակադեմիա» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավար Արաքսյա Ղևոնդյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №17815-2026 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացու փողոց 66 շենք հասցեում գտնվող անշարժ գույքը (վկայական №432084) վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ա. Շիրակացու փողոց, 66ա շենք, 4/1 առևտրի սրահ

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Բյութի Ակադեմիա» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավար Արաքսյա Ղևոնդյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» հունվարի 2026 թվականի № 2935-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Վ. ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №25052026-08-0040) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՏՎԱԾՆԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Տիգրան Հարոյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №17444-2026 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «ԼԻԼԱՐՄԻՆ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի, և շինությունների բաժանման սխեմաները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վ. Տերյան փողոց 2 հասցեում գտնվող բնակելի տունը (վկայական №25052026-08-0040) երկու մասերի բաժանելու նպատակով առանձնացված հատվածներին տրամադրել հասցեներ.
   1) **1651.54** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝
      Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Վ. Տերյան փողոց, 2 բնակելի տուն
   2) **396.15** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝
      Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ն. Օստրովսկու փողոց, 2/3 պարիսպ
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Տիգրան Հարոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. փ. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» հոկտեմբերի 2026 թվականի №2935-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №07032024-08-0033) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՏՎԱԾՆԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Կարինե Սարգսյանի լիազորված անձ Մարինե Սարգսյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №17029-2026 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «ԱԳ ԷՍԹԵՅԹ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի և շինությունների բաժանման սխեմաները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց 1-ին նրբանցք 1 հասցեում գտնվող բնակելի տունը (վկայական №07032024-08-0033) երկու մասերի բաժանելու նպատակով առանձնացված հատվածներին տրամադրել հասցեներ.

1) Հողամասի և շինությունների բաժանման սխեմայով սխեմաներով առանձնացված առաջին հատվածը հասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Հ. Ղանդիլյան փողոց, 1-ին նրբանցք, 1/2 բնակելի տուն

2) Հողամասի և շինությունների բաժանման սխեմայով սխեմաներով առանձնացված երկրորդ հատվածը հասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Հ. Ղանդիլյան փողոց, 1-ին նրբանցք, 1 բնակելի տուն

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Կարինե Սարգսյանի լիազորված անձ Մարինե Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2026 թվականի N 2937-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 2743-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վ. Տերյան փողոց 99/15 հասցեի 3.15 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» N 2743-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել թույլ տրված վիրապակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վ. Տերյան փողոց 99/15 հասցեի 3.15 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» N 2743-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1)Որոշման 1-ին կետում « ընդհանուր օգտագործում» բառերը փոխարինել «հասարակական» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հունվարի 2026 թվականի N2938-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի N 2548-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Փանյան փողոցի հարեվանությամբ գտնվող 129.65 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տան եվ դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 239 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացի Խաչատուր Համլետի Ավագյանի սեփականության իրավունքի ճանաչման եվ կարգավիճակի ճանաչելու մասին» N 2548-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել (հիմք՝ ըստ Վարսենիկ Վարդգեսի Ավագյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի հոկտեմբերի 5-ին № 17080 թվագրմամբ)):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Փանյան փողոցի հարեվանությամբ գտնվող 129.65 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տան եվ դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 239 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացի Խաչատուր Համլետի Ավագյանի սեփականության իրավունքի ճանաչման եվ կարգավիճակի ճանաչելու մասին» N 2548-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝
   1) Վերնագրում, որոշման 1-ին կետում « քաղաքացի» բառը փոխարինել « քաղաքացիներ » բառերով:
   2) Վերնագրում «Խաչատուր Համլետի Ավագյանի» բառերից հետո լրացնել «(1/2 մաս) և Վարսենիկ Վարդգեսի Ավագյանի(1/2 մաս) ընդհանուր բաժնային» բառերով և թվերով:
   3) Նախաբանում «Խաչատուր Համլետի Ավագյանը» բառերից հետո լրացնել «և Վարսենիկ Վարդգեսի Ավագյանը» բառերով:
   4) Որոշման 1-ին կետում «Խաչատուր Համլետի Ավագյանի (ծնված 1988 թվականի նոյեմբերի 17-ին)» բառերից և թվերից հետո լրացնել «(1/2 մաս) և Վարսենիկ Վարդգեսի Ավագյանի(1/2 մաս) (ծնված 1960 թվականի հունիսի 14-ին) ընդհանուր բաժնային» բառերով և թվերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Խաչատուր Համլետի Ավագյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> հոկտեմբերի 2026 թվականի N 2939-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԿԱՐԵՆ ԴԵՐԵՆԻԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով և հիմք ընդունելով ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Դերենիկի Գալստյանի 2026 թվականի հոկտեմբերի 5-ի զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետ Կարեն Դերենիկի Գալստյանին հոկտեմբերի 13-ից 17-ը գործուղել Սախայի Հանրապետության (Յակուտիա) Յակուտսկ քաղաք՝ <<Համագործակցություն հանուն ժողովուրդների խաղաղության և համերաշխության >> 1-ին միջազգային ֆորումին, հոկտեմբերի 17-ից 20-ը՝ քաղաք Մոսկվա ՝ Միջազգային քաղաքային ֆորումի նախապատրաստական աշխատանքների քննարկմանը մասնակցելու նպատակով:

2.Գործուղման ժամկետը ՝ 8 (ութ) օր՝ 2026 թվականի հոկտեմբերի 13-ից 20-ը ներառյալ:

3.Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգով:

4.Գործուղման ընթացքում Կարեն Դերենիկի Գալստյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի պետի տեղակալ Գրետա Վոլոդյայի Ջանոյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Դերենիկի Գալստյանին և Գրետա Վոլոդյայի Ջանոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2026 թվականի N 2940-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ Ա-Ի ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ № 14/1 ՀԱՍՑԵԻ 12.31 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Ա-ի փողոց 1-ին նրբանցք № 14/5 հասցեի 197.6 (մեկ հարյուր իննսունյոթ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Երվանդ Վոլոդյայի Հովհաննիսյանին (1/2 մաս) և Ազատուհի Հրաչիկի Հովհաննիսյանին (1/2 մաս) (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 21012026-08-0019 վկայական):

Քաղաքացի Երվանդ Հովհաննիսյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 11082026-08-0002 վկայական) Գարեգին Ա-ի փողոց 1-ին նրբանցք № 14/1 հասցեի 12.31 (տասներկու ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 2-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի № 154-Ա որոշումը, քաղաքացի Երվանդ Հովհաննիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի հունվարի 30-ին № 1178 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացիներ Երվանդ Վոլոդյայի Հովհաննիսյանին (1/2 մաս) և Ազատուհի Հրաչիկի Հովհաննիսյանին (1/2 մաս) ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Ա-ի փողոց 1-ին նրբանցք № 14/5 հասցեի 197.6 (մեկ հարյուր իննսունյոթ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Գարեգին Ա-ի փողոց 1-ին նրբանցք № 14/1 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 12.31 (տասներկու ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ընդլայնման նպատակով, որպես ընդհանուր բաժնային սեփականություն՝ յուրաքանչյուրին 1/2 մաս:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 54681 (հիսունչորս հազար վեց հարյուր ութսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացիներ Երվանդ Վոլոդյայի Հովհաննիսյանի և Ազատուհի Հրաչիկի Հովհաննիսյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Երվանդ Վոլոդյայի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Восстановимая подпись
Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հունվարի 2026 **թվականի** N 2941-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ս. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ № 3/1 ՀԱՍՑԵԻ 21.61 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ս. Տեր-Գաբրիելյան փողոց № 54/1 հասցեի 26.28 (քսանվեց ամբողջ քսանութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Լենա Մամիկոնի Դամիրջյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 13022026-08-0013 վկայական):

Քաղաքացի Լենա Դամիրջյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 25072026-08-0018 վկայական) Ս. Տեր-Գաբրիելյան փողոց 1-ին փակուղի № 3/1 հասցեի 21.61 (քսանմեկ ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 2-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի № 154-Ա որոշումը, քաղաքացի Լենա Դամիրջյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի փետրվարի 16-ին № 2037 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Լենա Մամիկոնի Դամիրջյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ս. Տեր-Գաբրիելյան փողոց № 54/1 հասցեի 26.28 (քսանվեց ամբողջ քսանութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Ս. Տեր-Գաբրիելյան փողոց 1-ին փակուղի № 3/1 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 21.61 (քսանմեկ ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ընդլայնման նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 1878 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 40583 (քառասուն հազար հինգ հարյուր ութսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Լենա Մամիկոնի Դամիրջյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Լենա Մամիկոնի Դամիրջյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

Восстанавливая подпись

X

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հունվարի 2026 թվականի N294-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ ՆՈՎԱ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 31.73 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 31.73 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (26.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 31.37 (երեսունմեկ ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 31.37 (երեսունմեկ ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (26.9 (քսանվեց ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի և 4-րդ բաժնի 34.2-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2026KM5EZK ծածկագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 31.37 (երեսունմեկ ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 31.37 (երեսունմեկ ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (26.9 (քսանվեց ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի և հասարակական նշանակության շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցը իրականացրած քաղաքացի Արուսյակ Գրիշայի Դերձակյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

Восстановимая подпись

X

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հունվարի 2026 թվականի N 2943-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ № 45 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 70.14 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (58.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, 240.23 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՒՍԱՆՆԱ ԳԱԼԻՑԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կարսի խճուղի 1-ին նրբանցք № 45 հասցեի 240.23 (երկու հարյուր քառասուն ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է Գյումրի համայնքի սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 05082026-08-0049 վկայական):

Հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» պրենքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Գյումրի համայքնի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի № 153-Ա որոշումը և քաղաքացի Սուսաննա Գալիցի Սարգսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի նոյեմբերի 28-ին № 25591 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Կարսի խճուղի 1-ին նրբանցք № 45 հասցեի 70.14 (յոթանասուն ամբողջ տասնչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (58.2 (հիսունութ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 299217 (երկու հարյուր իննսունինը հազար երկու հարյուր տասնյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի տունը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Սուսաննա Գալիցի Սարգսյանին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կարսի խճուղի 1-ին նրբանցք № 45 հասցեի 240.23 (երկու հարյուր քառասուն ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 1878 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 451151 (չորս հարյուր հիսունմեկ հազար մեկ հարյուր հիսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Սուսաննա Գալիցի Սարգսյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Սուսաննա Գալիցի Սարգսյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սուսաննա Գալիցի Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Սուսաննա Գալիցի Սարգսյանի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

Восстановимая подпись

X

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» նոյեմբերի 2026 թվականի N2944-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՖՈՐԱԼԲԵՐԳԻ ՓՈՂՈՑ № 4/24 ՀԱՍՑԵԻ 238.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆորալբերգի փողոց № 4/24 հասցեի 238.5 (երկու հարյուր երեսունութ ամբողջ հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ֆորալբերգի փողոց № 4/24 հասցեի 238.5 (երկու հարյուր երեսունութ ամբողջ հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Восстановимая подпись
X
Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՈՒՐԳԵՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«12»հոկտեմբերի 2026 թվական N 2945-Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով վարչական իրավախախտումների վերաբերյալ Օրենսգրքի 219.1 հոդվածով, 2026 թվականի հոկտեմբերի 09-ին, ժամը 14:30-ին, Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Ալեքսանդր Գուրգենի Մկրտչյանի (անձնագիր՝ AT0396383, տրված՝ 2020 թվականի փետրվարի 24-ին , 016-ի կողմից, հասցե՝ ք. Գյումրի,Մ.Մկրտչյան փող.տուն 27) ներկայությամբ, Օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով, քննելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներ՝ Մետաքսյա Եդիգարյանի և Արմեն Մովսիսյանի կողմից 2026 թվականի հոկտեմբերի 08-ին կազմած վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Օրենսգրքի՝ 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներ՝ Ա.Մովսիսյանը և Մ.Եդիգարյանը իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս, 2026 թվականի հոկտեմբերի 08-ին հայտնաբերել և օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմել են

քաղաքացի՝ Ալեքսանդր Գուրգենի Մկրտչյանի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն:

2026 թվականի հոկտեմբերի 08-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Ալեքսանդր Գուրգենի Մկրտչյանի կողմից Գյումրի քաղաքի, Մ.Մկրտչյան փող. տուն 27 հասցեում իրականացնում է ինքնակամ շինարարական աշխատանքներ, առանց համապատասխան թույլտվության,որը նախատեսված է օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով:

Քաղաքացի՝ Ալեքսանդր Գուրգենի Մկրտչյանը արձանագրության կրկնօրինակը ստացել է, ստանալու փաստը հավաստվում է նրա կողմից կատարված ստորագրությամբ:

Քաղաքացի՝ Ալեքսանդր Գուրգենի Մկրտչյանի վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է: Քաղաքացի՝ Ալեքսանդր Գուրգենի Մկրտչյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2026 թվականի հոկտեմբերի 08-ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ և կից ներկայացված նյութերով:

Վարչական վարույթի լսումների ժամանակ քաղաքացի՝ Ալեքսանդր Գուրգենի Մկրտչյանը հայտնեց, որ ընդունում է իր կողմից կատարված վարչական իրավախախտումը և ընդունում է 2026 թվականի հոկտեմբերի 08-ի արձանագրության բովանդակությունը:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը իր լիազորությունների շրջանակներում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրհինսնապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով:

Նկատի ունենալով վերոգրյալը ամբողջությամբ հաստատված եմ համարում, որ քաղաքացի՝ Ալեքսանդր Գուրգենի Մկրտչյանը թույլ է տվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 154-րդ հոդվածի 1-ին մասով, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և

վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին մասով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի 3-րդ հոդվածի դրույթներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի՝ Ալեքսանդր Գուրգենի Մկրտչյանին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրհիսնապատիկի՝ 750.000 /յոթ հարյուր հիսուն հազար / Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Պարտավորեցնել քաղաքացի՝ Ալեքսանդր Գուրգենի Մկրտչյանին սույն որոշումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները:
3. Պարտավորեցնել քաղաքացի՝ Ալեքսանդր Գուրգենի Մկրտչյանին չկատարել որևէ շինարարական աշխատանքներ՝ մինչև օրենքով սահմանված կարգով շինարարական թույլտվություն ստանալը:
4. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Ալեքսանդր Գուրգենի Մկրտչյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Ալեքսանդր Գուրգենի Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
6. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Ալեքսանդր Գուրգենի Մկրտչյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:
7. Սույն որոշմամբ նշանակված տուգանքը քաղաքացի՝ Ալեքսանդր Գուրգենի Մկրտչյանի կողմից պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ Գյումրու համայնքապետարանի թիվ 900 215 301 160 368 հաշվեհամարին, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:

Հարգանքով՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող՝ **Ա. Առաքելյան**

2026թ.,ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» հոկտեմբերի 2026 թվականի N2946 Ա

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐՎԱՌԱ ՄԿՐՏՉԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ԻՐ ԵՂԲՈՐ՝ ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2026 թվականի սեպտեմբերի 11-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Վարվառա Մկրտչի Մխիթարյանը (նույնականացման քարտ՝ 016185472) խնդրելով իրեն նշանակել խնամակալ իր անգործունակ ճանաչված եղբոր՝ 04 հուլիսի 1969 թվականին ծնված Սամվել Մկրտչի Մխիթարյանի (անձնագիր՝ AS0476088, տրված՝ 25.01.2019 թվականին 016-ի կողմից) նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 03 նոյեմբերի 2025 թվականի թիվ ՇԴ/0227/02/24 վճռով Սամվել Մկրտչի Մխիթարյանը ճանաչվել է անգործունակ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Հոգեկան Առողջության Կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված տեղեկությունների համաձայն դիմումատուն՝ Վարվառա Մկրտչի Մխիթարյանը Գյումրու նյարդահոգեբուժական և նարկոլոգիական դիսպանսերներում հաշվառման մեջ չի գտնվում (տեղեկանքները կցվում են):

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի «Գյումրու Բնակարանների Սպասարկում» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված տեղեկանքի Վարվառա Մկրտչի Մխիթարյանը իր անգործունակ ճանաչված եղբոր՝ Սամվել Մկրտչի Մխիթարյանի հետ համատեղ բնակվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի 26 Կոմիսարների փողոց 89 բնակելի տուն հասցեում (հիմք՝ տեղեկանք, տրված՝ 11.09.2026 թվականին N 1466):

Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և բարեկեցության նախարարության Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնը տվել է դրական եզրակացություն Վարվառա Մխիթարյանին Սամվել Մխիթարյանի նկատմամբ խնամակալ ճանաչելու մասին:

Ելնելով անգործունակ ճանաչված Սամվել Մկրտչի Մխիթարյանի շահից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Վարվառա Մկրտչի Մխիթարյանի 2026 թվականի սեպտեմբերի 11-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 16368 թվագրությամբ) և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և

հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 8-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սահմանել խնամակալություն՝ Վարվառա Մկրտչի Մխիթարյանին (նույնականացման քարտ՝ 016185472) նշանակել խնամակալ թիվ ՇԴ/0227/02/24 վճռով անգործունակ ճանաչված իր եղբոր՝ 04 հուլիսի 1969 թվականին ծնված Սամվել Մկրտչի Մխիթարյանի (անձնագիր՝ AS0476088) նկատմամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարվառա Մկրտչի Մխիթարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2026 թվականի N 294-Ա

«ԻՆԴՈՆԵԶԻԱ ՍՓԱՅՍ ՀԱՈՒՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ 1/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով «Ինդոնեզի Սփայս Հաուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի հոկտեմբերի 05-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հոկտեմբերի 05-ին 17801-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել «Ինդոնեզիա Սփայս Հաուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհ 1/5 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (պաստառ) ընդհանուր 1,76 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ինդոնեզիա Սփայս Հաուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Վարդուհի Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2026 **թվականի** N 2948-Ա

«ԻՄԻՋ Մ.Գ.» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով «Իմիջ Մ.Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի սեպտեմբերի 28-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հոկտեմբերի 05-ին 17797-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել «Իմիջ Մ.Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի տարածքում տեղադրված առկա վահանակների վրա տեղադրել (տեղաբաշխել)՝ արտաքին գովազդի պաստառ ընդհանուր 293,04 քմ մակերեսով՝ համաձայն հավելվածի:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի հոկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Իմիջ Մ.Գ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Աշոտ Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ 2026-10-09 14:47:13 GMT+4 Հաստատված է էկեՆԳ-ի կողմից Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավարի պաշտոնակատար
2026 թ. հունվարի 12-ի
N 298-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
<<ԻՄԻՋ Մ. Գ.>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ (ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ) ՀԱՍՑԵՆԵՐԻ

Հ/Հ	ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ	Քանակ	(քառ. մ)
1	Երևանյան խճուղի, խաչքարի մոտ, Գարեջուր	1	18
2	Շիրակացի-Ալ. Մանուկյան, Վայլդբերիս	2	36
3	Գորկու փողոց, Խաղաղության հրապարակ, Արարատ բանկ	1	18
4	Սայաթ-Նովա Ակադեմիայի դիմաց, Իդեալ համակարգ	1	18
5	Սայաթ-Նովա , Իդրամ	2	36
6	Սայաթ-Նովա 7, Սարդ	1	18
7	Սայաթ-Նովա փ. Միթի-ֆորմատ, կրթվելը նորաձև է	9	32,4
8	Վարդանանց հրապարակ 4 սքրոլլեր 8կողմ, Իդրամ	8	17,28
9	Ռիժկովի փողոց, 13 սքրոլլեր, Վայլդբերիս	26	56,16
10	Ռիժկովի փողոց, 10 սքրոլլեր, Կրթվելը նորաձև է	20	43,2
	Ընդամենը	71	293,04

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2026 թվականի N 2949-Ա

«ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով «Էյթիէլ սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի սեպտեմբերի 28-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հոկտեմբերի 05-ին 17795-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել «Էյթիէլ սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում տեղադրված առկա վահանակների վրա տեղադրել (տեղաբաշխել) արտաքին գովազդի պաստառներ ընդհանուր 608 քմ մակերեսով՝ համաձայն հավելվածի:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի հոկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Էյթիէլ սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Աշոտ Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավարի պաշտոնակատար
2026 թ. հունվարի 12-ի
N 29-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
<<ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ (ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ) ՀԱՍՑԵՆԵՐԻ

Հ/Հ	ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ	Քանակ	(քառ. մ)
1	Երևանյան խճ., Արարատ բանկ	1	18
2	Երևանյան-Գ. Նժդեհի խչմ., , Իդեալ համակարգ	1	18
3	Երևանյան խճ., գազալցակայան, կրթվելը նորաձև է	2	36
4	Երևանյան խճ., Վիլլ Գարրի դիմաց, վայլդբերիս	2	36
5	Շիրակացի փող, 8-րդ թաղ.-ի հարևանությամբ զին մասի հարև-մբ, Թիմ	2	36
6	Շիրակացի փող, զին մասի հարև-մբ, Թաքթիքալ սեքյուրիթի	1	18
7	Խաղաղության օղակ-Հաղթանակի խչմ., ՋՋ	1	18
8	Խաղաղության օղակ-Հաղթանակի խչմ., Ֆասթ էներջի	1	18
9	Խրիմյան հայրիկ-Անկաղության խչմ., Թաքթիքալ սեքյուրիթի	1	18
10	Խրիմյան հայրիկ-Անկաղության խչմ., Արարատ բանկ	1	18
11	Գ. Նժդեհ փող., մարզպետարանի դիմաց, Էվոկա բանկ	2	36
12	Սայաթ-Նովա փ.,20 կողմ, լայթբոքս, Իդրամ	20	50
13	Գ. Նժդեհ փող..Գյումրի հյուրանոցի դիմաց, Դիագեն	2	36
14	Գ. Նժդեհ փող., Իսուզ հյուրանոցի դիմաց, Ցիտո	1	18
15	Գ. Նժդեհ փող., 5/17 , Էկոսենս	2	36
16	Ա. Մանուկյան 2/19, Ֆասթ էներջի	1	18
17	Շահումյան 188, Վայլդբերիս	2	36
18	Խորենացի-Չարենցի խաչմերուկ, Կրթվելը նորաձև է	2	36
19	Վ. Սարգսյան 17/4, կրթվելը նորաձև է	2	36
20	Գ. Նժդեհ 1, ԱԲՍ ՄՈՏՈՐՍ	1	18
21	Գ. Նժդեհ 1, Վալետ	1	18
22	Սայաթ-Նովա 6/1, ԿՖՍ	2	36
	Ընդամենը	**51**	**608**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2026 **թվականի** N2950-Ա

«ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ 188 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով «Էյթիէլ սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի սեպտեմբերի 30-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հոկտեմբերի 05-ին 17794-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել «Էյթիէլ սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի տեղադրված առկա լեդ-էկրանի վրա ցուցադրել գովազդային տեսահոլովակներ՝ ընդհանուր 47,6 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի հոկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Էյթիէլ սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Աշոտ Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» հոկտեմբերի 2026 թվականի N 2951-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ N 70 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 60.51 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (50.68 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ 31.34 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԼՈՒՍԻՆԵ ԱՐԹՈՒՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Կամոյի փողոց № 70 հասցեի 31.34 (երեսունմեկ ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 02092026-08-0006 վկայական):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի № 153-Ա որոշումը, քաղաքացի՝ Լուսինե Արթուր Գևորգյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունվարի 29-ին N 1623 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Կամոյի փողոց № 70 հասցեի 60.51 (վաթսուն ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (50.68(հիսուն ամբողջ վաթսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 357432 (երեք հարյուր հիսունյոթ հազար չորս հարյուր երեսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի տունը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Լուսինե Արթուր Գևորգյանին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կամոյի փողոց № 70 հասցեի 31.34 (երեսունմեկ ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 139212 (մեկ հարյուր երեսունինը հազար երկու հարյուր տասներկուպ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Լուսինե Արթուր Գևորգյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Լուսինե Արթուր Գևորգյանին պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Լուսինե Արթուր Գևորգյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Լուսինե Արթուր Գևորգյանի միջոցների հաշվին:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**
2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» հունվարի 2026 թվականի N 2952-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՍԱՅԱՆ, ՊԱՎԼՈՎԻ, ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻՆ ՀԱՐՈՂ 0,56 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Գյումրի համայնքի Եսայան, Պավլովի, Բաշինջաղյան փողոցներին հարող 0,56 հա մակերեսով տարածքում զբոսայգու ստեղծման ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝
ա.պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Արմինե Սարգսյան – Գյումրու համայքնապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի տեղակալ,
բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Հուլիկ Ղազարյան – Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետի օգնական,
2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» հոկտեմբերի 2026 թվականի N 2953-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՍԱՅԱՆ, ՊԱՎԼՈՎԻ, ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻՆ ՀԱՐՈՂ 0,56 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Գյումրի համայնքի Եսայան, Պավլովի, Բաշինջաղյան փողոցներին հարող 0,56 հա մակերեսով տարածքում զբոսայգու ստեղծման ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Հովսեփ Սիմոնյան – համայնքի ղեկավարի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ,

4) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ, Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» հունվարի 2026 **թվականի** N2954-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՌՈՄԻԿ ՀԱՄԼԵՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ (1/2 ՄԱՍ) ԵՎ ՄԵԼԱՆՅԱ ՌՈՄԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ (1/2 ՄԱՍ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 49 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԻ N 1/1 ՀԱՍՑԵԻ ՏԱՐԱԾՔԻ 14,91 ԵՎ 7,08 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 2 ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Ռոմիկ Համլետի Գևորգյանին (1/2 մաս) և Մելանյա Ռոմիկի Գևորգյանին (1/2 մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 21072026-08-0046 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի N 49 հասցեի շենքի N 1/1 հասցեի տարածքի 14,91 (տասնչորս ամբողջ իննսունմեկ հարյուրերորդական) և 7,08 (յոթ ամբողջ ութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսներով օրինական սենյակներում ինքնակամ բացված է 2 պատուհան, որոնք նշված են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 21072026-08-0046 վկայականում:

Քաղաքացի Ռոմիկ Համլետի Գևորգյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին նշված պատուհաններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1 կետի, 18-րդ կետի դ ենթակետի, 27-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացի Ռոմիկ Համլետի Գևորգյանի դիմումը (մուտքագրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում 2026 թվականի սեպտեմբերի 22-ին N 16907 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Ռոմիկ Համլետի Գևորգյանին (1/2 մաս) և Մելանյա Ռոմիկի Գևորգյանին (1/2 մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի N 49 հասցեի շենքի N 1/1 հասցեի տարածքի 14,91 (տասնչորս ամբողջ իննսունմեկ հարյուրերորդական) և 7,08 (յոթ ամբողջ ութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսներով օրինական սենյակներում ինքնակամ բացված 2 պատուհանները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 5450 (հինգ հազար չորս հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Ռոմիկ Համլետի Գևորգյանին և Մելանյա Ռոմիկի Գևորգյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

2026-10-14 12:28:25 GMT+4
Համեմատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական, քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» նոյեմբերի 2026 թվականի N2955-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՐԳԻՍ ՀԱԿՈԲԻ ԴԵՄԻՐՃՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ № 25/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 5.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՐԹԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սարգիս Հակոբի Դեմիրճյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական № 26112014-08-0037) Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոց № 25/1 հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 5.8 (հինգ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հարթակ:

Քաղաքացի Սարգիս Հակոբի Դեմիրճյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ աստիճանահարթակը օրինականացնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 կետով, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2026ESN3NQ ծածկագիրը, քաղաքացի՝ Սարգիս Հակոբի Դեմիրճյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի հուլիսի 17-ին № 12861 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Սարգիս Հակոբի Դեմիրճյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոց № 25/1 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 5.8 (հինգ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հարթակը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 11420 (տասնմեկ հազար չորս հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Որոշումը կայանալու պահից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում, որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սարգիս Հակոբի Դեմիրճյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» հոկտեմբերի 2026 **թվականի** N 2956-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՆԱՀԻՏ ԱՂԱՍՈՒ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ(1/2 ՄԱՍ) ԵՎ ԳՈՀԱՐԻԿ ԱՂԱՍՈՒ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ(1/2 ՄԱՍ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏՈԼՍՏՈՅԻ ՓՈՂՈՑ № 64 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 152.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 51 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Անահիտ Աղասու Մարտիրոսյանին(1/2 մաս) և Գոհարիկ Աղասու Խաչատրյանին(1/2 մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր № 6623,6625,6626 տրված 2026 թվականի մայիսի 8-ին, № 6624 տրված 2026 թվականի մայիսի 7-ին) Գյումրի քաղաքի Տոլստոյի փողոց № 64 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործում է 51 (հիսունմեկ) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, սեփական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 138.85(մեկ հարյուր երեսունհինգ ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ և 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 36.59 (երեսունվեց ամբողջ հիսունհինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինություններ:
Քաղաքացիներ Անահիտ Աղասու Մարտիրոսյանի և Գոհարիկ Աղասու Խաչատրյանի լիազորված անձ Էմմա Վաղինակի Վարդանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինության նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ, 22.1-րդ կետերի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2026ESVKZG ծածկագիրը և հաշվի առնելով քաղաքացիներ Անահիտ Աղասու Մարտիրոսյանի և Գոհարիկ Աղասու Խաչատրյանի լիազորված անձ Էմմա Վաղինակի Վարդանյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի հունիսի 16-ին № 8928 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Անահիտ Աղասու Մարտիրոսյանին(1/2 մաս) և Գոհարիկ Աղասու Խաչատրյանին(1/2 մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Տոլստոյի փողոց № 64 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 133.17(մեկ հարյուր երեսուներեք ամբողջ տասնյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
2. Քաղաքացիներ Անահիտ Աղասու Մարտիրոսյանին(1/2 մաս) և Գոհարիկ Աղասու Խաչատրյանին(1/2 մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Տոլստոյի փողոց № 64 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 36.59 (երեսունվեց ամբողջ հիսունհինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 107882 (մեկ հարյուր յոթ հազար ութ հարյուր ութսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:
3.Ճանաչել քաղաքացիներ Անահիտ Աղասու Մարտիրոսյանին(1/2 մաս)(ծնված 1959 թվականի մայիսի 9-ին) և Գոհարիկ Աղասու Խաչատրյանին(1/2 մաս) (ծնված 1957 թվականի հուլիսի 8-ին) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Տոլստոյի փողոց № 64 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 51 (հիսունմեկ) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 20.01 (քսան ամբողջ մեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունների նկատմամբ իսկ 3.93(երեք ամբողջ իննսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը ենթակա է քանդման:
4.Ինքնակամ թողնել քաղաքացիներ Անահիտ Աղասու Մարտիրոսյանին(1/2 մաս) և Գոհարիկ Աղասու Խաչատրյանին(1/2 մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Տոլստոյի փողոց № 64 հասցեի տան հողամասում

ինքնակամ ներառված 5.68 (հինգ ամբողջ վաթսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ ը:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Անահիտ Աղասու Մարտիրոսյանի և Գոհար Աղասու Խաչատրյանի լիազորված անձ Էմմա Վանիկի Վարդանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
6.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ



Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հոկտեմբերի 2026 թվականի N 2957-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 08-ԻՑ 11-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2026 թվականի մայիսի 11-ի N 23-Լ հրամանով հաստատված ուղեցույցի «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 07-ի N 90-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն էլեկտրոնային համակարգի միջոցով աճուրդով օտարելու համար հայտարարել աճուրդ, որը կկայանա 2026 թվականի դեկտեմբերի 08-ից մինչև դեկտեմբերի 11-ը ներառյալ , համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026-10-15 16:20:26 GMT+4
Համաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2026 թ. ք.Գյումրի

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարի
2026 թվականի դեկտեմբերի 1-ի
N 2957-Ա որոշման

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գյումրի համայնքը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2026 թվականի դեկտեմբերի 08-ի ժամը 11[00]-ից մինչև դեկտեմբերի 11-ի ժամը 11[00]: https:/ /www.e-auctions.am կայքի միջոցով:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի N 152-Ա որոշման համաձայն օտարման ենթակա ներքոհիշյալ հողամասերը

Հ/Հ	Լոտի հ/հ	Հողամասի հասցեն /գտնվելու Վայրը /տարածագնահատման գոտին	Հողամասի կադաստրային ծածկագիրը և մակերեսը՝ քառ.մ.	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների /ներառյալ սերվիտուտների/ առկայությունը	Ճանապարհների, ջրատարի,կոյուղու,էլեկտրահաղորդման գծերի,գազատարի առկայության մասին տվյալներ	Հողամասի գնահատված արժեքը	Հատկացված հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը	Մեկնարկային գինը /ՀՀ դրամ/	Նախավճարը ՀՀ դրամ
1		Վարդ-Բաղի 1-ին մ/շ 1-ին թաղ. N 5/4 12-րդ գոտի	08-001-0164-0002 600,0	Բնակելի տան կառուցում	չկա	չկա	7 000 000	1732500,0	9 100 000	
2.		Գարեգին Ա փողոց N 2/20 11-րդ գոտի	08-001-0527-0024 415,64	Բնակելի տան կառուցում	չկա	չկա	4 400 000	1846189,75	5 720 000	
3		Վ .Սարգսյան փողոց N 29/13 11-րդ գոտի	08-001-0302-0058 121,19	Բնակելի տան կառուցում	չկա	չկա	1 950 000	538301,74	2 540 000	
4		Կամոյի փողոց N 71/14 9-րդ գոտի	08-001-0671-0210 76,0	Բնակելի տան կառուցում	չկա	չկա	1 200 000	799048,80	1 560 000	
5		Ա. Սպենդիարովի փողոց N 7/4 13-րդ գոտի	08-001-1146-0151 144,97	Բնակելի տան կառուցում	չկա	չկա	1 700 000	990768,47	2 200 000	
6		Մ. Թետչերի փողոց 3-րդ նրբանցք N 24/1 11-րդ գոտի	08-001-0426-0059 392,0	Բնակելի տան կառուցում	չկա	չկա	5 600 000	1741185,60	7 280 000	
7		Մ. Թետչերի փողոց 3-րդ նրբանցք N 24	08-001-0426-0058 390.6	Բնակելի տան կառուցում	չկա	չկա	6 600 000	1734967,08	8 580 000	

8		Վ.Համբարձումյան փողոց 5-րդ նրբանցք N 1 12-րդ գոտի	08-001-1042-0054 247,3	Բնակելի տան կառուցում	չկա	չկա	3 000 000	714078,75	3 900 000	
9		Սիամանթոյի փողոց 1-ին նրբանցք, 1-ին փակուղի N 4/3 13-րդ գոտի	08-001-0128-0069 32,64	Ավտոտնակի կառուցում	չկա	չկա	400 000	61288,13	520 000	
10		Մու-2 թաղամաս 11-րդ փողոց N 4 13-րդ գոտի	08-001-0083-0268 345,0	Սպասարկման օբյեկտի կառուցում	չկա	չկա	1 305 000	647806,50	1 700 000	
11		Բուլվարային փողոց N 16/17 13-րդ գոտի	08-001-0232-0012 366,27	Բնակելի տան կառուցում	չկա	չկա	4 000 000	687745,18	5 200 000	
12		Վ.Սարգսյան փողոց 1-ին թաղամաս N 103/1 11-րդ գոտի	08-001-0317-0112 376,51	Բնակելի տան կառուցում	չկա	չկա	3 300 000	1672382,12	4 300 000	
13		Ա.Սավոյան փողոց N 10/1 11-րդ գոտի	08-001-0324-0032 357,7	Բնակելի տան կառուցում	չկա	չկա	4 100 000	1588831,86	5 330 000	
14		Շիրակացու փողոց 7-րդ փակուղի N 3/2 10-րդ գոտի	08-001-0320-0107 231,3	Բնակելի տան կառուցում	չկա	չկա	2 600 000	1580773,59	3 380 000	

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Գյումրու համայնքապետարան /հասցեն՝ ք.Գյումրի, Վարդանանց հր. 1, 0312 2.22.29/: համայնքապետարանում /Վարդանանցիր. 1/, ինչպես նաև Գյումրու համայնքապետարանի ինտերնետային կայքում՝ www.gyumricity.am:

Աճուրդին մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձիք (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), ովքեր վաճառվող լոտի նկատմամբ կարող են ունենալ սեփականության իրավունք

- Էլեկտրոնային համակարգում մասնակիցների գրանցումն իրականացվում է առցանց եղանակով (www.e-auctions.am) էլեկտրոնային համակարգում, գրանցումը իրականացվում է ՀՀ կառավարության 2023թվականի սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ սահմանված հավելվածի:
- Աճուրդի մասնակցության համար էլեկտրոնային համակարգում (www.e-auctions.am) գրանցվելուց և մուտք գործելուց հետո e-payments համակարգի միջոցով ՀՀ կառավարության 2023թվականի սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 18-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից առնվազն 5 րոպե առաջ վճարել նախավճարը:
- Էլեկտրոնային աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը: Հաղթողը որոշվում է համակարգի միջոցով:
- Էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցն ստորագրված արձանագրությունն ու պահանջվող փաստաթղթերը աճուրդի կայացման օրվանից մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը առցանց եղանակով փոխանցում է կազմակերպիչին, արձանագրությունն ստորագրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հաղթողը պարտավոր է փոխանցել լոտի գինը ամբողջությամբ՝ հաշվանցելով նախավճարը՝ 900215301145 հաշվեհամարին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հոկտեմբերի 2026 թվականի N 2938-Ա

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-ԻՆ ՏՐՎԱԾ N120/23 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կարեն Ավետիսյանին Գյումրի քաղաքի Ֆորալբերգի փողոց 2/16 հասցեում բնակելի տան նոր կառուցման շինարարական աշխատանքների կատարման համար 2023 թվականի հուլիսի 6-ին տրվել է N120/23 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1. 2023 թվականի հուլիսի 6-ին տրված N120/23 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 3 (երեք) ամիս ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Կարեն Ավետիսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հոկտեմբերի 2026 թվականի N2959-Ա

2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-ԻՆ ՏՐՎԱԾ N38/23 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գրիշա Դանիելյանին Գյումրի քաղաքի Ֆորալբերգի փողոց 2/14 հասցեում բնակելի տան նոր կառուցման շինարարական աշխատանքների կատարման համար 2023 թվականի մարտի 31-ին տրվել է N38/23 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1. 2023 թվականի մարտի 31-ին տրված N38/23 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 3 (երեք) ամիս ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գրիշա Դանիելյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» հոկտեմբերի 2026 թվականի N 2960-Ա

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-ԻՆ ՏՐՎԱԾ N 33/24 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արտավազդ Խանդոյանին Գյումրի քաղաքի Արևելյան շրջանցող ճանապարհ 17/1 հասցեով անհատական բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքների կատարման համար 2024 թվականի ապրիլի 22-ին տրվել է N 33/24 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով Արտավազդ Խանդոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 05.10.2026թ. N17819) և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1. 2024 թվականի ապրիլի 22-ին տրված N 33/24 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 3 (երեք) ամիս ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արտավազդ Խանդոյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ 2026-10-15 11:40:14 GMT+4 Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հոկտեմբերի 2026 թվականի N 2961-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՎԱՀՐԱՄ ՄԻՑԽԱՐԻ ԻԳԻԹՅԱՆԻՆ ԵՎ ԱԼՎԱՐԴ ՌԱՖԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա.ՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ № 2/16 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 122.85 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Վահրամ Միցխարի Իգիթյանին և Ալվարդ Ռաֆիկի Խաչատրյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 10082026-08-0016 վկայական) Գյումրի քաղաքի Ա. Շիրակացու փողոց № 2/16 հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 122.85 (մեկ հարյուր քսաներկու ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (93.6 (իննսուներեք ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերսով արտադրական շինություններ:

Քաղաքացիներ Վահրամ Իգիթյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփական հողամասում ինքնակամ կառուցված արտադրական շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 10082026-08-0016 վկայականը, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տեղեկանքը՝ US-11082026-08-0523 և քաղաքացի Վահրամ Իգիթյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի օգոստոսի 20-ին № 14965 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Վահրամ Միցխարի Իգիթյանին և Ալվարդ Ռաֆիկի Խաչատրյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ա. Շիրակացու փողոց № 2/16 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 122.85 (մեկ հարյուր քսաներկու ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (93.6 (իննսուներեք ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով արտադրական շինությունները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 362898 (երեք հարյուր վաթսուներկու ութ հարյուր իննսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Վահրամ Միցխարի Իգիթյանին և Ալվարդ Ռաֆիկի Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

Восстановимая подпись

X

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано ARAKELYAN AVETIS 3910850278 Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հունվարի 2026 թվականի N 2962 -Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՐԱՏ ԿԱՐԱՊԵՏԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՋԱՓԱՐԻՉԵԻ ՓՈՂՈՑ N28 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 48.68 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 1.75 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Արարատ Կարապետի Կարապետյանին պատկանող Գյումրի քաղաքի Ջափարիձեի փողոց N28 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված են 48.68 (քառասունութ ամբողջ վաթսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ (հիմք՝ ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2026V2GBFX ծածկագիր), օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 1.75 (մեկ ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Արարատ Կարապետի Կարապետյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով քաղաքացի Արարատ Կարապետի Կարապետյանի դիմումը(մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականին N13197 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Արարատ Կարապետի Կարապետյանին (ծնված 1946 թվականի դեկտեմբերի 12-ին) պատկանող Գյումրի քաղաքի Ջափարիձեի փողոց N28 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 48.68 (քառասունութ ամբողջ վաթսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
2. Ճանաչել քաղաքացի Արարատ Կարապետի Կարապետյանի սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Ջափարիձեի փողոց N28 հասցեի բնակելի տան հողամասին կից, ավել օգտագործվող 1.75 (մեկ ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա շինության նկատմամբ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Արարատ Կարապետի Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-10-14 12:27:19 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հունվարի 2026 թվականի N 2963 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՏՆԻՇՅԱՆ ՓՈՂՈՑ N61/2 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ 128.43 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 23.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (22.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇՎԱՔԱՐԱՆԸ, 27.36 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (25.24 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ, 7.87 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (6.33 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 0.91 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐԻՍՊԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Մատնիշյան փողոց N61/2 հասցեին կից 128.43 (հարյուր քսանութ ամբողջ քառասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված են 23.2 (քսաներեք ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր արտաքին (22.6(քսաներկու ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով շվաքարան, 27.36(քսանյոթ ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (25.24(քսանհինգ ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակ, 7.87 (յոթ ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (6.33(վեց ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություն և 0.91(զրո ամբողջ իննսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Սերոբ Բաղոյանը:

Նկատի ունենալով, որ շինությունների պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023HCJ4K4 ծածկագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի քաղաքի Մատնիշյան փողոց N61/2 հասցեին կից 128.43 (հարյուր քսանութ ամբողջ քառասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 23.2 (քսաներեք ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր արտաքին (22.6(քսաներկու ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով շվաքարանը, 27.36(քսանյոթ ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (25.24(քսանհինգ ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը, 7.87 (յոթ ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (6.33(վեց ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը և 0.91(զրո ամբողջ իննսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը համարել համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Սերոբ Բաղոյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Սերոբ Բաղոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» նոյեմբերի 2026 **թվականի** N2964-Ա

«ՏՐԻՊԼ ՍԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով «Տրիպլ Սի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի հոկտեմբերի 05-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հոկտեմբերի 08-ին 18117-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել «Տրիպլ Սի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա հասցեում առկա սիթի-ֆորմատների վրա տեղադրել (տեղաբաշխել) գովազդային պաստառներ՝ ընդհանուր 50 քմ մակերեսով՝ համաձայն հավելվածի:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի նոյեմբերի 09-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Տրիպլ Սի>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Նորայր Դավթյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավարի պաշտոնակատար
2026 թ. հունվարի 15-ի
N 2964-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

<<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ (ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ) ՀԱՍՑԵՆԵՐԻ

Հ/Հ	ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ	Քանակ	(քառ. մ)
1	Սայաթ-Նովա փողոց	15	30
2	Ալեք Մանուկյան փողոց	5	20
	Ընդամենը	20	50

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» նոյեմբերի 2026 **թվականի** N 2965-Ա

«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ 56/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով «Վեգա Ուորլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի հոկտեմբերի 01-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հոկտեմբերի 05-ին 17799-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել «Վեգա Ուորլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացի 56/3 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 66,7 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վեգա Ուորլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Մարինե Պողոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հոկտեմբերի 2026 **թվականի** N 2966-Ա

<<ՖԻՆՔԱ ՈՒՎԿ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Ֆինքա ՈւՎԿ>> փակ բաժնետիրական ընկերության 2026 թվականի հոկտեմբերի 06-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հոկտեմբերի 06-ին 17966-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Ֆինքա ՈՒՎԿ>> փակ բաժնետիրական ընկերությանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրան Մեծ 1/3 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1,5 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Ֆինքա ՈՒՎԿ>> փակ բաժնետիրական ընկերության Գյումրի մասնաճյուղի ղեկավար՝ Հարութ Մանուկյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» սեպտեմբերի 2026 թվականի N 2967-Ա

<<ՏԱՆԳՈ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՅԱՐԱՆԱՄԵՐՁ ՀՐԱՊԱՐԱԿ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Տանգո>> փակ բաժնետիրական ընկերության 2026 թվականի սեպտեմբերի 14-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի սեպտեմբերի 15-ին 16525-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Տանգո>> փակ բաժնետիրական ընկերությանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կայարանամերձ հրապարակ 1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (պաստառ) ընդհանուր 60,5 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Տանգո>> փակ բաժնետիրական ընկերության ընկերության լիազորված անձ՝ Մարինե Բլեյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<15>> հոկտեմբերի 2026 թվականի N 2968 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԻԼԻ ՍԱՄՎԵԼԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 173-րդ հոդվածով և հիմք ընդունելով Լիլի Սամվելի Գասպարյանի 2026 թվականի հոկտեմբերի 12-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Պարարվեստի դպրոց >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լիլի Սամվելի Գասպարյանին տրամադրել երեխայի խնամքի արձակուրդ մինչև երեխայի երեք տարեկան դառնալը՝ մինչև 2027 թվականի հոկտեմբերի 16-ը:
2. Արձակուրդի ընթացքում Լիլի Սամվելի Գասպարյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության ուսմասվար Մարինե Արշակի Խաչատրյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլի Սամվելի Գասպարյանին և Մարինե Արշակի Խաչատրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

2026-10-15 15:21:30 GMT+4
Վավերացված է ԷԿԵՆԳԻ կողմից

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝
ք.Գյումրի **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հոկտեմբերի 2026 թվականի N 2969-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 61 Զ/Ա 15 ՇԵՆՔ 2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ա. Շիրակացու փողոց 61 զ/ա 15 շենք 2 հասցեի բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Օլգա Ալբերտի Հովհաննիսյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 02092019-08-0020 վկայական):

Քաղաքացի Օլգա Ալբերտի Հովհաննիսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Ա. Շիրակացու փողոց 61 զ/ա 15 շենք 2 հասցեի 46,44(քառասունվեց ամբողջ քառասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանի նպատակային նշանակությունը բնակելիից հասարակական, իսկ գործառական նշանակությունը որպես ատամնաբուժարան փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և քաղաքացի Օլգա Ալբերտի Հովհաննիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի օգոստոսի 4-ին N 13823 թվագրմամբ).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Փոփոխել Գյումրի քաղաքի Ա. Շիրակացու փողոց 61 զ/ա 15 շենք 2 հասցեի 46,44(քառասունվեց ամբողջ քառասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանի նպատակային նշանակությունը բնակելիից հասարակական, իսկ գործառական նշանակությունը որպես ատամնաբուժարան:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին քաղաքացի Օլգա Ալբերտի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» «հունվարի» 2026 ԹՎԱԿԱՆԻ N 29Ո-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի «ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ» N 630 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետի 1997 թվականի օգոստոսի 30–ի թիվ 630 որոշման 681 կետի համաձայն՝ թույլատրվել է սեփականաշնորհել Հանեսօղլյան 8 տուն., երկու սենյականոց, 57,2 քմ. ընդհանուր մակերեսով, որից 38,0 քմ. բնակելի, 33 դրամ հաշվեկշռային արժեքով, 2-3 աստիճանի վնասվածությամբ, առանձին մեկուսացված տունը, քաղ. Լյովա Գարեգինի Ստեփանյանի անվամբ, որպես ընդհանուր համատեղ սեփականություն, ընտանիքի ներքոհիշյալ անդամների հետ՝

1. Ստեփանյան Լյովա Գարեգինի
2. Հովսեփյան Լաուրա Բաբկենի
3. Ստեփանյան Պետրոս Լյովայի
4. Ստեփանյան Գարեգին Լյովայի
5. Ստեփանյան Աննա Լյովայի
6. Մոլեգյան Մարինե Մարտիրոսի:

Շիրակի մարզի Գյումրու քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնում 1998 թվականի հուլիսի 13-ին թիվ № ԱԱ086670 թվագրմամբ կատարվել է գրանցում Լյովա Գարեգինի Ստեփանյանի մահվան վերաբերյալ:

Գյումրու քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնում 2023 թվականի օգոստոսի 31-ին թիվ № ԲԱ748412 թվագրմամբ կատարվել է գրանցում Լաուրա Բաբկենի Հովսեփյանի մահվան վերաբերյալ:

Գյումրու քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնում 2026 թվականի սեպտեմբերի 7-ին թիվ № ԲԲ179084 թվագրմամբ կատարվել է գրանցում Գարեգին Լյովայի Ստեփանյանի մահվան վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Աննա Լյովյի Ստեփանյանը (անձնագիր՝ AV0462777, տրված՝ 2022 թվականի հոկտեմբերի 04-ին, 016-ի կողմից) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 1997 թվականի օգոստոսի 30-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» թիվ 630 որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) փոփոխություններ կատարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 27.1 կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով

և հիմք ընդունելով քաղաքացի՝ Աննա Լյովայի Ստեփանյանի 2026 թվականի հոկտեմբերի 01-ի դիմումը՝ (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված՝ թիվ 17555 թվագրությամբ)՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 1997 թվականի օգոստոսի 30-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 630 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) 1-ին կետից հանել «Ստեփանյան Լյովա Գարեգինի» բառերը,
   2) 2-րդ կետից հանել «Հովսեփյան Լաուրա Բաբկենի» բառերը,
   3) 4–րդ կետից հանել «Ստեփանյան Գարեգին Լյովայի» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Աննա Լյովայի Ստեփանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարին

Восстановимая подпись

X

փոխարինող Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 Ա. Առաքելյան

քաղաք Գյումրի, 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հոկտեմբերի 2026 **թվականի** N2971-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԱԳԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ 242 ՇԵՆՔ 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Գագիկ Նիկողոսյանի 2026 թվականի հոկտեմբերի 06-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հոկտեմբերի 06-ին 17965-2026 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Գագիկ Նիկողոսյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Աբովյան 242 շենք 2/1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 20 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2027 թվականի նոյեմբերի 01-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Գագիկ Նիկողոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հոկտեմբերի 2026 թվականի N 2972-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի N 1670 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով, որ ժամկետը լրացել է 2013 թվականին, հինք ընդունելով քաղաքացի Գևորգ Սարգսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի հոկտեմբերի 09-ին N 18307 թվագրմամբ) և այն հանգամանքը, որ Սաշա Սարգսյանը մահացած է՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել 2008 թվականի օգոստոսի 13-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի «Քաղ. Սաշա Սարգսյանին ժամանակավոր մետաղական ավտոտնակ տեղադրելու նպատակով 20,0 քառ մ մակերեսով հողամաս, կառուցապատման իրավունքով տրամադրելու մասի» N 1670 որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գևորգ Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

2026-10-16 13:35:29 GMT+4
Համաձայնված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հոկտեմբերի 2026 **թվականի** N 2973-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՌՆԻԿ ԺՈՐԱՅԻ ՀԱՐՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑ 7 ՇԵՆՔ N 25/2 ՆԿՈՒՂ ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1(ՄԵԿ) ԴՈՒՌԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Գառնիկ Ժորայի Հարոյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք ըստ սեփականության իրավունքի վկայականի՝ տրված 21.07.2021 թվական, N 21072021-08-0006) Գյումրի քաղաքի Պարույր Սևակի փողոց 7 շենք N 25/2 նկուղ հասցեում ինքնակամ բացվել է 1(մեկ) դուռը:
Քաղաքացի Գառնիկ Ժորայի Հարոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված ինքնակամ բացված 1(մեկ) դուռը օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետի դ) ենթակետի, հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառույցը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով քաղաքացի Գառնիկ Ժորայի Հարոյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականին N 16266 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Գառնիկ Ժորայի Հարոյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Պարույր Սևակի փողոց 7 շենք N 25/2 նկուղ հասցեում ինքնակամ բացված 1(մեկ) դուռը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 2316/ երկու հազար երեք հարյուր տասնվեց/ Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գառնիկ Ժորայի Հարոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

Восстанавливая подпись

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2026 թվականի №2974-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի №2704-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/2032-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 23-ի №2704-Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված բնակելի շինություններին, դրանց կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ս. Շահումյան փողոց, 210/7 բնակելի տուն

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» հունվարի 2026 թվականի №2975Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի №2693-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Ջ/2031-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 23-ի №2693-Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված բնակելի շինություններին, դրանց կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Մ. Շչեդրինի փողոց, 7/21 բնակելի տուն

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<__16__>> __հոկտեմբերի__ 2026 թվականի N __2976__ -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻԻ << ՄԵՐ ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՇՈՂԻԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Շողիկ Արամայիսի Մելքոնյանի 2026 թվականի հոկտեմբերի 7-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրիի << Մեր Մկրտչյան թանգարան >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Շողիկ Արամայիսի Մելքոնյանին տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2026 թվականի նոյեմբերի 1-ից:

2. Ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 24 աշխատանքային օր՝ 2026 թվականի նոյեմբերի 1-ից 28-ը ներառյալ:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված ժամանակահատվածում Շողիկ Արամայիսի Մելքոնյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության էքսկուրսավար Ալեքսանդր Լևոնի Այվազյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Շողիկ Արամայիսի Մելքոնյանին և Ալեքսանդր Լևոնի Այվազյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026-10-16 15:24:43 GMT+4

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 16 » հոկտեմբերի 2026 թվականի N 297-Ա

ԴԱՎԻԹ ՍԵՐԳԵՅԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵ ՀՈՒՇԱՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով առողջապահության ոլորտում երկարամյա բարեխիղճ և պատասխանատու աշխատանքը, մասնագիտական բարձր որակները, աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում ցուցաբերած հետևողականությունն ու նվիրվածությունը, ինչպես նաև մարդկային հոգատար վերաբերմունքն ու համագործակցության բարձր մշակույթը, պատասխանատվության զգացումն ու աշխատանքային պարտականությունների պատշաճ իրականացումը, բուժօգնության որակի բարելավման, բուժառուների առողջության պահպանմանն ուղղված նշանակալի ավանդը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության 18-րդ կետի 10-րդ ենթակետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դավիթ Սերգեյի Մինասյանին պարգևատրել Գյումրի համայնքի ոսկե հուշամեդալով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դավիթ Սերգեյի Մինասյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
համայնքի ղեկավարին փոխարինող

2026 թ.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հոկտեմբերի 2026 թվականի Ն 2978-Ա

ՆՈՐԱՅՐ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵ ՀՈՒՇԱՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով հայկական ազգային երաժշտարվեստի զարգացման և հանրահռչակման գործում նշանակալի ավանդը, դուդուկի, կլառնետի և այլ ազգային նվագարանների կատարողական արվեստի տարածման, ինչպես նաև միջազգային հարթակներում հայկական երաժշտական մշակույթը ներկայացնելու և Գյումրի քաղաքի երաժշտական և մշակութային կյանքի զարգացման գործում ունեցած ավանդը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության 18-րդ կետի 10-րդ ենթակետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Նորայր Վոլոդյայի Բարսեղյանին պարգևատրել Գյումրի համայնքի ոսկե հուշամեդալով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նորայր Վոլոդյայի Բարսեղյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
համայնքի ղեկավարին փոխարինող

2026 թ.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Բ
3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 16 » հոկտեմբերի 2026 թվականի N 2979-Ա

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵ ՀՈՒՇԱՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Գյումրի քաղաքում լողի զարգացման գործում ունեցած երկարամյա մասնագիտական բարձր վարպետությունը, լողի մարզաձևի զարգացման և երիտասարդ սերնդի մարզական դաստիարակության գործում ներդրած նշանակալի ավանդը, Գյումրու ջրային մարզաձևերի մարզադպրոցի վերանորոգման գործում կատարած հսկայածավալ աշխատանքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության 18-րդ կետի 10-րդ ենթակետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հովհաննես Անդրանիկի Կարապետյանին պարգևատրել Գյումրի համայնքի ոսկե հուշամեդալով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովհաննես Անդրանիկի Կարապետյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
համայնքի ղեկավարին փոխարինող

2026 թ.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«16» հոկտեմբերի 2026 թվականի N2980-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ՓՈՂՈՑ 46 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ, ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ռուսթավելու փողոց 46 հասցեի 55,0/հիսունգինգ/ քառակուսի մետր մակերեսով 08-001-0734-0140 կադաստրային ծածկագրով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Նունե Հելբերտի Ադամյանին: Նշված հողամասը չափագրման ժամանակ կադաստրային քարտեզում սխալ է տեղադրվել իր իրական տեղադիրքից, որի արդյունքում առաջացել է հողամասի տեղադիրքի և սահմանների ճշտման անհրաժեշտություն:

Չափագրողի որակավորում ունեցող անձի կողմից կատարվել է նոր չափագրություն, հողամասի ճշգրտված տեղադիրքով :

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման 2-րդ հավելվածի, հիմք ընդունելով քաղաքացի Նունե Հելբերտի Ադամյանի դիմումը (մուտքագրված Գյումրու համայնքապետարանում 2026 թվականի հոկտեմբերի 09-ին N 18249 թվագրմամբ)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել չափագրողի որակավորում ունեցող անձի «Ս-Ֆոռմատ Սթայլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված, քաղաքացի Նունե Հելբերտի Ադամյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ռուսթավելու փողոց 46 հասցեի 55,0/հիսունգինգ/ քառակուսի մետր մակերեսով 08-001-0734-0140 կադաստրային ծածկագրով հողամասի տեղադիրքը, գծային չափերը և հատակագիծը:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ վերը նշված հողամասի տեղադիրքի ճշտման և սեփականության իրավունքի վերագրանցման նպատակով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Նունե Հելբերտի Ադամյանին ծանուցման օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

Восстановимая подпись

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2026 թվականի №2981-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՕՂԱԿ 5 ՇԵՆՔ, 4 (ՎԿԱՅԱԿԱՆ №09102019-08-0015) ԵՎ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀՐԱՊԱՐԱԿ 5 ՇԵՆՔ, 4/1 (ՎԿԱՅԱԿԱՆ №01112019-08-0038) ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Սամվել Մնացյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №17821-2026 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Բագրատունյաց օղակ 5 շենք, 4 (վկայական №09102019-08-0015) և Բագրատունյաց հրապարակ 5 շենք, 4/1 (վկայական №01112019-08-0038) հասցեներում գտնվող բնակարանների միավորումից առաջացող անշարժ գույքը հասցեավորել՝
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Բագրատունյաց հրապարակ, 5 շենք, 4 բնակարան
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սամվել Մնացյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի